Հաստատում եմ՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Ա.Խառատյան
(Պատվիրատուի ղեկավարի անուն ազգանուն)

______________________
( ստորագրություն)

# Արձանագրություն N2

**«ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1»** ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր)

ք. Երևան

21 հունվար 2020թ.
ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Տ.Գաբրիելյան

քարտուղար՝ Մ.Գրիգորյան

անդամներ՝ Է.Կարապետյան, Ն.Մուրադյան, Ա.Դանիելյան Մ.Կարապետյան

## 1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման մրցույթին մասնակցելու հրավերը 2019թ հրապարակվել է «gnumner.am» կայքի գնումներ կատարելու ԲՄ ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև www.armeps.am էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկները բացվել են 2020 թվականի հունվարի 21-ին՝ ժամը 10:00-ին www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

գ. www.armeps.am կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ | ՌԴ ք. Չերնոգրադ, Սելեկցիոննի 13 ա ՌԴ հեռ +79281933646 |
| 2. | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | ՌԴ ք.Վլադիմիր Յուրևեց միկր .հեռ. +74922529924 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0*

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1 **«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ և «Սկիֆ Ագրոս»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն « **Սկիֆ Ագրոս** » ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1 թերի է լրացված՝ մանանորապես լրացված չէ արտադրողի անվանում սյունյակը:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. <Գնումն. գործընթ. կազմ. մասին> թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ մանավորապես. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ իրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնահատման հանձնաժողովի նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0*

**3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ**

Չեն եղել

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0*

**4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ**

Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

| Հ/Հ չափ. | Ապրանքի անվանումը | Նախահաշվով նախատեսված գումար | Գնային առաջարկներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ | | | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | | |
| | | | ինքնարժեք | շահույթ ներառյալ | ԱԱՀ ներառյալ | ինքնարժեք | շահույթ ներառյալ | ԱԱՀ ներառյալ |
| 1 | Անասնաբուժությա ն մեջ կիրառվող կենդանիների դաբաղ հիվանդության դեմ պատվաստանյութ | 226272500 | 156050000 | 226272500 | | 224009775 | 226272500 | |

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0***

Հաջորդ նիստը տեղի կունենա **«Սկիֆ Ագրոս»** ՍՊԸ-ի կողմից շտկված հավելված 1.1-ը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 17:00-ին ք. Երևան, Կառավարության 3-րդ շենք, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 1-ին հարկ Տ.Գաբրիելյանի ընդունարան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

նախագահ՝ ____________________ Տ.Գաբրիելյան

քարտուղար՝ ____________________ Մ.Գրիգորյան

անդամներ՝ ____________________ Է.Կարապետյան

____________________ Ն.Մուրադյան

____________________ Ա.Դանիելյան

-------------------------------------- Մ.Կարապետյան